

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրական բաժնում պահվող Դավիթ Անանունի (1879—1943) արխիվում ի թիվս այլ նյութերի գտնվում են բաղմաթիվ նամակներ, Ստորև ներկայացվում են հայ գրողներին և գործիչներին ուղղված և նրանցից ստացված նամակներից մի քանիսը: Նամակները հրատարակության է ներկայացրել հանգուցյալ բանասեր Դոհար Աղնավորյանը, որը, ջափոք, չկարողացավ գրել նախատեսված ծանոթագրությունները:

1

<17 հունվարի 1913>

Մեծարգո պ. Դավիթ Տեր-Դանիելյան,

Վարչությունս սրանով հայտնում է Ձեզ, որ Ընկերությանս ընդհանուր ժողովը, համաձայն իր կանոնադրության 4-րդ հոդվածի, գաղտնի քվեարկությամբ ընտրեց Ձեզ Ընկերության անդամ:

Վարչության նախագահ՝ Հ. Թումանյան
Անդամ-ֆարտուղար՝ Գյուտ Բե. Աղանյան

2

1914 թ. հունվարի 3, Բաքու:

Մեծարգո բարեկամ պ. Հովհաննես,

Շնորհավոր նոր տարի:

Դիմում եմ Ձեզ մի չափազանց կարևոր խնդիրքով: Ես այստեղ մի բրոշյուր եմ հրատարակել «Բանվորական նոր օրենքները» վերնագրով: Բրոշյուրն արտատպություն է «Նուանդ» շաբաթաթերթից և «Բաքվի ձայնից» և վերաբերում է բանվորների ապահովագրության հարցին: Սպասում էի այս օրերս թույլտվություն գրաքննությունից՝ վաճառքի հանելու և փոխարեն ստացվում է կարգադրություն կոնֆիսկացիայի ենթարկելու: Այժմ ամբողջ հրատարակությունը ձերբակալված է և ես դեռ սպասում եմ, որ կարող է պատահել, որ ինձ էլ պատասխանատվության ենթարկեն: Պիտի ասեմ, որ բրոշյուրի բովանդակությունը ոչինչ գրգռիչ բան չի ներկայացնում: Նման բրոշյուրներ ռուսերեն տասնյակ տարբեր հրատարակություններ կարելի է հաշվել: Սակայն ինչ արգելված չէ ռուս հեղինակին և ընթերցողին, այն արգելվում է մեզ:

Իմ Թիֆլիս եղած ժամանակ ինձ ասացին, որ հայ գրքերի գրաքննիչն է Քալանթարյան անունով մի պարոն, որ այդ պարոնը միևնույն ժամանակ խառնրվում է մեր ազգային գործերին և նույնիսկ հոգաբարձու է մի ծխական դպրոցում: Այստեղից ես եզրակացնում եմ, որ այդ պարոնը՝ անմատչելի անձն չպիտի լինի և հավանորեն որոշ միջոցներ կլինին ազդելու նրա վրան, որ ձերբակալությունից ազատե գրքույկը և ազատ թողնե իմ օձիքը:

Արդ շատ ու շատ խնդրում եմ մտահոգվել գրածիս մասին: Եթե Դուք անձամբ հնարավորություն չունենաք ազդելու պ. Քալանթարյանի վրա, ապա գուցե այդ անձը Ձեզ ծանոթ բարեկամների միջոցով: Համենայն դեպս ջանացե՛ք համոզելու այդ մարդուն, որ նա իզուր է խոչընդոտներ հարուցանում հայ խոսքի առաջ. ինչ կարգելվի հայ բանվորին կարդալ հայերեն՝ նա կկարդա ռուս:

աերեն: Դրանից ի՞նչ շահ: Կամ ի՞նչ շահ, որ մի հայ հեղինակ պիտի նեղությունների մատնվի:

Համոզված եմ, մեծարգո բարեկամ, որ Դուք կաշխատեք վերացնել գրքույկի վրա դրած արգելքը, որ դրանով Դուք ինձ կազատեք քաղաքական արգոսներից: Կանխորեն շնորհակալությունս եմ հայտնում Ձեր կրեւիք նեղությունների համար:

Մեղմում եմ Ձեր աջը: Ամենայն հարգանքով

Դ. Տեր-Պանիկյան

P. S. Գրքույկը, որպես վերնագիր, կրում է իմ պսևդոնիմը.

3

<1915, 7 հունվարի, Պետրոգրադ>

Սիրելի ընկեր,

Ահա ուղարկում եմ Ձեր հիշած թերթի համար երկու ոտանավոր: Եթե հարմար կլինին տպելու համար՝ հատուկ կիսդրեի Ձեզ ուղադրություն դարձնել, որ վրիպակ չլինի, կամ գոնե այնպիսի վրիպակ, որ աղավաղում է ոտանավորի միտքը: Կուզեի հոգված ուղարկել, բայց վախեցա որ կուշանա— ժամանակը կարճ է և ես հնար չունիմ ամբողջապես հոգվածին նվիրելու այդ ժամանակը:

Բարեներով Ձեր Վահագն Տերյան

4

Բաքու, 8-ին փետրվարի 1915 թ.

Մեծարգո բարեկամ պ. Լեո,

Իր ժամանակին Ձեր նամակը և հոգվածը ստացել եմ: Մեր խմբագրական հանձնաժողովը չափազանց գոհ մնաց Ձեր հոգվածից, սակայն մինչև օրս մեղ չհաջողվեց բացառիկ թերթի հրատարակումը: Պետք է հաղթահարել մի շարք ձևական դժվարություններ: Թույլտվության խնդիրը անվերջ ուշանում է տեղական տիպար գրաքննիչի ձգձգումների պատճառով: Համոզված եմ, որ մեզ վերջիվերջո պիտի հաջողվի թերթի հրատարակումը: Համենայն դեպս եթե նոր թույլտվության իրավունք անկարելի եղավ ստանալ՝ պիտի օգտագործենք մի հին թույլտվության իրավունք, որը մեր համախոհին չի պատկանում: Հարկավ, բացառիկ թերթի համարը Ձեզ կուղարկվի: Իմ և ընկերների կողմից շնորհակալություն եմ հայտնում Ձեր սիրալիր վերաբերմունքի համար:

Մեծարգո բարեկամ, Ձեր նամակը ինձ չափազանց վշտացրեց: Առանց այն էլ, ինձ հայտնի էր, որ հայ գրողը միշտ նեղ վիճակի մեջ է լինում: Ենթադրում էի, որ Ձեր վիճակը չէր կարող բացառություն կազմել, մանավանդ որ այժմ Դուք շնորհիվ անցուկ-մոռանցուկ մարդկանց քաջագործությունների, կապ չունեք որևէ հայ հրատարակության հետ: Այո՛, Ձեր նամակի մեջ հայտնած ցանկությունը սպասելի էր. չէ որ և մեր ժերմանազարդ պատմագիր Նրինջյանցը նույնպես ստիպված էր վաճառքի հանել իր գրադարանը: Իմ ուղեղում չի կարողանում տեղավորվել այն միտքը, որ գրողը կարող է զրկված լինել իր սեփական գրադարանից: Ձեր նամակից հետո ես իմ աննշան սոցիալական գրությունը կամեցա այլ կերպ նպաստել գործին, այն է՝ հրատարակել գտնել Ձեր աշխատասիրած հայոց պատմությանը: Այդ իմաստով դիմեցի նախ և առաջ Միրզա Սարուխանյանի գործերի կառավարիչ պ. Համազասպ Տեր-Առաքելյանին (նա, որ թարգմանություններ է անում թուրքերենից, Հզոր Քեշիշյան ստորագրությամբ) և առաջարկեցի նրան խոսել Միրզայի հետ և համաձայնեցնել նրան իր վրա վերցնելու հրատարակության ծախքերը: Նա սկզբունքով ոչինչ չունի իմ առաջարկի դեմ, սակայն ասաց, որ ներկա պայմաններում, երբ Մ. Ս. խոշոր նվիրաբերություններ է արել՝ հավանորեն կհրաժարվի

և չի ընդունիլ մեր խնդիրքը: Նրա կարծիքով պետք է սպասել մինչև որ վերջանա պատերազմը իր պատճառած աղետներով: Այս անհաջողությունից հետո ես մի նոր դիմում արի: Դա իմ բարեկամ Պողոս Կարա-Մուրզային էր: Նրա աներոջ որդին, ինժ. Հովհ. Ամիրջանցը (մոսկվաբնակ), այժմ չափազանց հարուստ մարդ է: Ես նրան ծանոթ եմ և հիշում եմ, որ այդ անձը ջահել ժամանակ սեր ուներ դեպի հայ գիրքը: Կարա-Մուրզային առաջարկեցի, որ թե ինքը և թե իր կինը իրանց կողմից դիմում անեն Ամիրջանցին և առաջարկեն հրատարակելու Ձեր աշխատությունը: Այստեղ իմ առաջարկությունն ու դիմումը հանդիպեց սիրալիր վերաբերմունքի: Նրանք նամակ գրել են Մոսկվա և սպասում են Ամիրջանցի պատասխանին: Այդ պարունը մի առժամանակ բացակայել է Մոսկվայից, բայց այժմ այնտեղ է: Կարա-Մուրզան կարծում է, որ գուցե թե իր խնդիրքը չմերժվի: Եվ եթե մերժում եղավ, ապա դա պիտի պատճառաբանվի դարձյալ պատերազմի պատճառած ծախքերով: Ես, համենայն դեպս, պիտի աշխատեմ այս ուղղությամբ և մեղը իմը չպիտի լինի, եթե հայ ունեւորները քարսիրտ լինեն հայ պատմության և գրականության դիմաց:

Մի՞թե կարիք կա կրկնելու, որ ինձ համար հասարակական հանցանք է թվում այն, որ հայ ազգը հանդուրժում է Ձեր ակամա լռությունը: Է՛լ որ ապագայի մասին է հուզվում այդ ազգը, եթե այսօր պիտի լռե նրա վաստակալոր դրողը: Ինձ և իմ համախոհներին հայտնել են, որ Թիֆլիսում հայկական ներկայացուցիչների համագումար պիտի լինի: Մի կողմից բժ. Լ. Աթաբեկյանը՝ Թիֆլիսում գտնված ժամանակ հորաբերության մեջ է մտել Մեսրոպ եպ. հետ, առաջարկելով, որ այդ համագումարին հրավիրվեն նաև մեր երկու ներկայացուցիչները: Ինչպես գրում է մեզ Լ. Աթ. այդ առաջարկը չի մերժվել: Այժմ մենք լիազորել ենք ներկայացուցիչներ լինելու Լ. Աթաբեկյանին և բժ. Տիգրան Իսախանյանին: Եթե վերջինս անկարող եղավ գալ Թիֆլիս, ապա նրան կփոխարինեմ մի ուրիշը: Որքան գիտեմ, դուք Ազգային բյուրոյի անդամ եք և եթե համագումարում հարց ծագե մեր ներկայացուցիչների մանդատների մասին, ապա բարի եղեք հօգուտ մերոնց արտահայտվելու: Ձեզ հայտնի պիտի լինի, որ Բաքվի տեղական մարմինը մերժեց իր մեջ ընդունելու մեր ներկայացուցիչներին և այդ պատճառով մենք հիմա չենք մասնակցում պատգամավորների ընտրությունը: Բաքվի մարմնի ուղուրպատորական ընթացքի մասին երևի մերոնք կխոսենք այդ համագումարում:

Ընդունեցեք ջերմ ողջուններս, Ձեր Դ. Տեր-Ռանիելյան

5

1916 թ., 23 սեպտեմբերի, էջմիածին

Սիրելի Դավիթ,

...նոստացել էի քեզ աշխատակցել «Գործին» և ես կկատարեի իմ խոստումը, եթե խմբագրության «համբերատարությունը» դեպի իր աշխատակիցները չստանար այդքան տարօրինակ չափեր. նման դեպքերում համբերատարությունը «անտարբերության» է վերածվում միայն: Թերթերում տպած հայտարարությունը կասկած չէ թողնում, որ նոր ամսագիրը պետք է բերան դառնա «բոլոր հայ գրողների» անխտիր: Յուրաքանչյուրը դրանցից կարող է զետեղել տալ իր անունը ձեր աշխատակիցների ցանկում: Ես չգիտեմ և ոչ մի լուրջ գրական ձեռնարկություն, որ այսքան պլակատային բնավորություն տար իր հրապարակական դիմումներին: Իր գրիչը հարգող և իր հասարակական արժանիքն ըմբռնող գրողը չի կարող հանգիստ գտնել այդպիսի մի խառնարանում:

Հրապարակի վրա է առայժմ խմբագրության «հավատը» միայն, որ ինձ չի համոզում ոչնչով: Պետք է ցավել այսուամենայնիվ, որ այդ «հավատով» ներշնչված մարդիկ ավելի դոգմատիկ են, քան այն «աղանդավորները», որոնք

հրապարակ են բերում համեմատյան դեպս իրանց քննական դիտողությունները միայն: Անունները, իհարկե, կարևոր չեն. կապերնք ու կտեսնենք «Գործը»: Եվ եթե համոզվեմ այնուհետև, թե սխալվում եմ, կշտկեմ իմ սխալը՝ ելակետ ընդունելով ոչ թե ձեր ոչնչի չպարտավորացնող հավատը, այլ այդ հավատով ներշնչված իրական գործը:

Վաղուց է չես երևում թերթերում: «Մշակը» չորացավ առանց քեզ. տարաբախտաբար ոչ միայն «Մշակը», այլև «Հորիզոնը». այդ «չբերք կինը» կալտառանում էր գոնե երբ առիթ էր հանդիսանում նիդակներ ճոճել քո դեմ: Վերջերս «Հորիզոնում» գրեց քո մի քանի մաքերի դեմ Հակոբ Մանուկյան անունով մի պարոն: Գիտե՞ս ով է սա. մեր ճեմարանում սովորողներից մեկը. Կարդացող, հետաքրքրվող տղա է. բայց, իհարկե, դեռ քիչ բան է մարսել: Տրնտեսագիտությունից դեռևս տարի պիտի դասախոսություններ լսի ինձ մոտ: Մարքսի մասին հայտնած նրա մտքերը զավեշտական էին: Կառիճը կարողացել է, բայց դեռ չի հասկացել: Վարդանյանը նրանից ավելի լավ չէ ըմբռնում տնտեսական խնդիրները, ուստի և տպագրում է նրա հայտնած բոլոր հիմարությունները (օր. հավել. արժեքի ծագման մասին): Չարժե, իհարկե, որ դու արժանացնես ուշադրության աշակերտական այս մարդանքները: Որպես նրա ուսուցչի՝ այդ նեղությունը ինձ կարող ես թողնել:

Պողոսը գնաց «Յերալան», մտավ թեմ. դպրոցը: Ոչ մի կերպ հնարավոր չէր պահել նրան այստեղ: Տեսուչը մեղավոր գտնվեց մասամբ. մասամբ էլ ինքը կամակորոշություններ արեց: Մեջտեղ տուժողը եղավ դպրոցը: Դժվար թե հաջողվի Մակինցյանին արժանի հաջորդ գտնել: Մեր «Ֆրակցիան» մեռավ. մնացի մենակ «շանուգյուլի ըռըխըմ»:

Գիրքդ ուղարկիր: Եթե ուղարկես դրքիցդ մոտ 20 օրինակ էջմիածին՝ հուսով եմ, կկարողանամ վաճառել, միայն թե շատ շուտ չուշացնես:

Հաղորդի՛ր քո հասցեն:

Լե՛ր ողջ

Քո Աշոտ <Հովհաննիսյան>

6

1919, 28 ն., Թիֆլիս

Սիրելի բարեկամ,

Ձեզ հասանելիք դրամից ուղարկում եմ առայժմ երեք հազար ռուբլի: Ինչո՞ւ՝ կհարցնեք:

Նախ՝ էստեղ շատ գրականների դրությունը էնքան վատ է, որ դալիս են՝ ես էլ ում փողը մոտս է լինում՝ տալիս եմ իրենց: Էնպես էլ Ձերն էի արել: Խոստանում են միշտ ու, իհարկե, ետ չեն բերում: Էսպեսով էլ ինքս ընկել եմ մի ահագին պարտքի ստակ:

Մի խոսքով՝ երեք հազար դրկում եմ, հարյուր հազարից նշանակած 5 հազարի հաշվին, մնում է երկու հազարը, էն էլ կուղարկեմ բյուրոյից տալիք գումարի հետ՝ մոտ օրերս: Շնորհակալ եմ մեր բյուրոյի հանձնարարությունը կատարելու համար:

Նամակս շատ վաղ եմ գրում, թե մի քիչ էլ գրական դրույց անեինք:

Ձերմ բարեներով միշտ բարեկամդ

Հովհ. Թումանյան

7

29 մայիսի 1920, Թիֆլիս

Սիրելի Դավիթ,

Ախպեր, ես քեզ մոտ սներես դուրս եկա:

Խոստացա թե «Հայկոոպի» համար «Մերոնք» կգրեմ կուղարկեմ ու շարի:

Միշտ էսպես է լինում, երբ որ մարդ ուրիշի տեղակ խոսք է տալիս: Ես էլ իմ մուսայի տեղակ խոսք տվի ու նա չեկավ, ես էլ մնացի սևերես:

Վերջին ժամանակներս գործերս էլ, տրամադրությունս էլ՝ շատ էին խառը, միաժամանակ հիվանդությունս էլ վրա հասավ ու ես գրելու փոխարեն՝ ինքս դարձա գրելու նյութ:

Իրևի թերթերում կարդացիր, որ բժիշկների կոնսիլիումը խիստ կարգադրություններ է արել, արգելել է ինձ այցելուների ընդունել և գործով զբաղվել:

Բանն էն է, որ սիրտս խառաբ դուրս եկավ: Ասենք առաջ էլ շտրություններ էր անում, բայց վերջերս ավելի համը հանեց և սրա խաթեր ես էլ ընկա էսպես պատժի տակ:

Զիշտն ասեմ, ես էլ էի շատ ուզում հանգստանամ ու գրականությամբ պարապեմ, բայց չէր լինում և չի լինում: Եվ մասամբ լավ եղավ, որ փակեցին տանը (թեև էլի օրական մի քանի մարդ մոտս լինում են կոնսրաբանտով): Ասում եմ մասամբ, որովհետև սրանով բան չի դառնալ և մտքումս կա, վաղուց, տեղափոխվել Լոռի, հարմարություններ ստեղծել իմ սիրած բնության մեջ, հարազատ ժողովրդի մեջ ու և՛ հանգստանալ և՛ պարապել: Բհարկե, սրա հետ ինչ-ինչ դժվարություններ կան կապված, բայց էդ դժվարությունները պետք է հաղթեմ ու էս մուրազը տեղ հասցնեմ: Կարծում եմ մեր կառավարությունն էլ իր կողմից կօգնի: Էսքան տարի մտածել եմ պարապեմ ու չեմ կարողացել պարապեմ, միշտ հետաձգել եմ: Սրանից դենն էլ հետաձգել չի լինի: Ոչ միայն ժամանակս է անց կենում, այլև հենց ինքս էլ եմ անց կենում, բայց ինձ ուժեղ կերպով էսպես է դրդում ու տրամադրում մեր նոր կյանքը, նոր Հայաստանը: Ամեն մարդ այժմ պետք է իր տեղը ամուր կանգնի և ավելի էռանդով անի իր անելիք գործը: Եվ մենք շատ բան պետք է անենք ու կարող ենք անել: Ես զարմանալի մեծ հավատ ունեմ ու մեծ կարծիք մեր ցեղի հոգևոր ու բարոյական կարողության (պոտենցիա) վրա:

Թե տաճկական վերջին փորձանքից էլ ազատվեցինք, ամեն բան շատ լավ կզնա, իմն էլ ընդհանուրի հետ:

Բայց էս խորհրդածությունից կամ հիվանդի զառանցանքներից քեզ օգուտ չկա, եթե նաղդ մի օգուտ կա քեզ, էդ էն է, որ նամակիս հետ երկու քառյակ եմ ուղարկում, գուցե թե դրանով կարողանամ քու խմբագրական ցասումը մեղմել, մինչև՝ Աստված ողորմած է, հետո էլ, այսինքն՝ ամառը «Մերոնք» կուղարկեմ: Իհարկե, եթե գրեմ:

Այ տղա, էս անտեր տաքությունից չեմ կարողանում կարգին գրեմ, չգիտեմ կարողանալու ես կարդաս՝ թե չէ: Մրսել եմ, ինչ ա՛ չգիտեմ:

Շատ սիրով ու կարոտով բարև ամենքիդ և տերն մեր Հիսուս Քրիստոս եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեցուն և այլն:

Քո Հովն. Թումանյան

Սիրելի Սահակ,

Քանի օր առաջ քեզ պատվիրած նամակ եմ գրել թանգարանի Հեղափոխության բաժնի կարիքների մասին: Այժմ կրկնում եմ նույնը: Պետերբուրգի նախկին ժանդարմական վարչության մեջ պահվում են հայ անլեզալ թերթերի կոմպլեկտներ, թուղթիկներ, գործիչների լուսանկարներ, զանազան զեկուցումներ հայ հեղ. շարժման մասին: Աշխատիր այդ բոլորը ստանալ և մեզ ուղարկել: Աշխատիր նաև սենատից ստանալ դաշնակցության գործը իր բոլոր իրական (вещественное) տվյալներով, նախնական քննության ու դատավա-

րության արձանագրութիւններով: Այս ուղղութեամբ արա՝ ինչ հնարավոր է: Մասնավորապէս ինձ համար խնդրել էի Պլեխանովի բոլոր գործերի մի կոմպիլեկտ, ինչպէս և Обществ. движение в России в начале 20-го века հավաքական գործը: Այժմ հիշեցնելով, խնդրում եմ ձեռք բերես ինձ համար հետևյալ գրքերը ազգային հարցին վերաբերյալ.

1. Формы национального движения в соврем. государствах, редакция Кастеленского, 1910 г.

2. Отто Бауэр, «Национальный вопрос и соц-демокр.».

3. Рудольф Шпрингер (Карл Реннер), «Национальный вопрос».

4. Протоколы брюнского партийтага.

Այս գրքերից կարող են լինել բուկինիստների մոտ, մասնավոր՝ գրադարաններում:

Ողջ եղիր, քո Դավիթ

9

1926, 30 նոյեմբերի, Երևան

Շատ սիրելի Հրաչ,

Նամակդ ստացա: Ինչ որ պիտի գրեմ՝ այն է, որ հիշեցնեմ անելիքներդ: Ամենից առաջ շնորհակալ եմ անհատներ ժողովել 1897 թվականին ձերբակալած արմենականների մասին (Գարեգին Բաղեշյան, Փանոս Թերլեմեզյան և այլն, թվով կարծեմ 20 հոգի) և հաղորդել ինձ: Արտակը այս բանում օգնական կլինի, քանի որ ինքն էլ պատասխանատվության է ենթարկվել: Ապա աղբյուրներ ու նյութեր էի խնդրել թյուրքահայ հասարակական կյանքը ուսումնասիրելու համար (հողային հարաբերություններ, առևտրա-արդյունաբերական կյանք, ուսումնական խնդիրներ, միջցեղային հարաբերություններ և այլն): Ենթադրում եմ, թե այս բանում քեզ աջակցել կարող է պ. Վոն Բաշալյանը, որին խնդրում եմ բարեներս հաղորդել և հիշեցնել, որ ինքն էլ ժամանակին, երբ Երևան էր, խոստացել էր նույնպէս նյութեր ուղարկել այս հարցերի վերաբերյալ, մասնավոր թե խոստացել էր դնել ու ստանալ Արփիար Արփիարյանի արխիվը և ուղարկել թանգարանին:

Խնդրում եմ քեզ ու Արտակին, որ ժողովք մամուլի այն համարները, որոնք հոգվածներ են պարունակում իմ գրքի մասին և ինձ ուղարկեք (կարելի է այդ անել Սիմոնիկ Փիրումյանի միջոցով):

Երևանը և կյանքը քո տեսածն է մնում: Նույն դեմքերը, նույն զրույցները, նույն ձանձրութիւնը: Մարդիկ ցնցվեցին երկրաշարժի առիթով: Հին մտավորականները այն հույսն էին տածում, թե գաղութների հայերը հրատապ օգնության կգան, սակայն մինչև օրն շոշափելի բան չերևաց. Անդամանեխորեն հիվանդ է հայ մարդու հոգին: Ոչ միայն ֆիզիկապէս պարտվեցանք արտաքին թշնամուց, այլ մեր հոգին իսկ ծանր վերք է ստացել և հանրական հոգսերը, հանրական ձգտումները ու ճիգերը մարելու վրա են: Եթե Հայաստանի փոքրութիւլ գավառներից մեկի գլխին սլայթած աղետն իսկ անդոր է թափահարելու մարդկանց՝ նշանակում է իսկապէս անդամանախորեն հանգել է մեր հոգու կրակը: Անշափ ուրախ կլինեմ, եթե հակառակը ապացուցվի:

Ողջ ու առողջ եմ: Մի փոփոխություն, որ կատարվեց իմ կյանքում՝ այն է, որ այլևս պաշտոնի չեմ թանգարանում: Այս պատճառով նամակներդ բնաւարանիս հասցեով կուղարկես—Աբովյան փողոց № 45—ինձ: Հասցես գրել կարող ես և թանգարանին՝ ինձ հանձնելու համար:

Ողջ լե՛ր և բարեներս ընդունիր:

Բարեկիր Արտակին: Հարցրե՞լ ես նրանից արդյոք, թե իմ աշխատության 11 հատորի քսան օրինակը Մալումյանը 1922 թ. հասցրել է նրան, թե ոչ: Այո՞ւ մասին էլ էի խնդրել քեզ, երբ հյուր էիր մեզ մոտ:

Հա՛, չմոռանաս հին ու նոր պարբերականներ ժողովել թանգարանի համար: Այս մասին այսօր գրում եմ նկարիչ Մարտիրոս Սարյանին, որ Փարիզ է: Նրա հետ միասին հոգ տարեք ձոխացնելու թանգարանի մամուլի հավաքածուն:

Սեղմում եմ աչդ: Քո Դավիթ

10

<անթվակիր>

Սիրելի Դավիթ,

Խնդրում եմ Չարենցին հանձնիր «Пролет Культ»-ի համարները և այն բոլոր խորհրդային ամսագրերը, որոնք կարող են օգտակար լինել մեր շինարար աշխատանքին՝ Հայաստանի միջազգային աշխատավորության կուլտուրական «հավաքման» հարցում:

Աշոտ <Հովհաննիսյան>